

«10» փետրվարիի 2017 թ.

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ Հերմինե Վարդանյանին

Լրագրող Քրիստինա Տեր-Մաթևոսյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տկն Վարդանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության
մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տեղեկատվություն տրամադրել այն մասին,
թե՝

1. Օրերս Երևան քաղաքի «Բարև Երևան» խմբակցության անդամ Անահիտ Բախշյանը
մամուլի մի հաղորդագրություն էր տարածել, որում ասվում էր, որ Արմավիրի մարզի
Արտաշար համայնքի դպրոցի տնօրենի մրցույթը դիտավորյալ կերպով ձախողվում է
մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ցուցումով: Խնդրում եմ մեկնաբանել սա:
2. Հաղորդագրության մեջ նաև ասվում էր, որ Արմավիրի մարզպետը նշել է, որ Հասմիկ
Սրապիոնյանը չի համապատասխանում դպրոցի տնօրենի պաշտոնին: Խնդրում եմ
նշել, թե որոնք են չհամապատասխանելու պատճառները:
3. Որո՞նք են եղել պատճառները դպրոցի կառավարման խորհրդի երեք անդամների՝
Աշոտ Հակոբյանի, Վիգեն Խաչատրյանի և Հակոբ Հովասափյանի, երկու մրցույթներին
էլ չմասնակցելու համար:

Կանխավ շնորհակալ եմ՝

Քրիստինա Տեր-Մաթևոսյան